«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր՝

_____ Դ. Ս. ԽԻԹԱՐՅԱՆ

«28» «Նոյեմբերի» 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ՀԱՅԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ <<ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ>> ԺԹ. 00.03 - <<Սոցիալական հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության.

Մարդու կյանքի և ընդհանուր զարգացման առանցքային շրջափուլերից է դեռահասության տարիքը, որն ակնհայտ է «ճգնաժամային» դրսևորումներով այն տրամաբանությամբ, որ այս փուլում վերափոխվում է դեռահասի ողջ օրգանիզմը, մարմինը, արտաքինը, մեծ փոփոխությունների է ենթարկվում հոգեկան և ֆիզիկական զարգացումը, իսկ նշանակալի կենսաբանական գործընթացը սեռական հասունացումն է, որը հանգեցնում է հոգեբանական տեղաշարժերի: Հենց այդ տարիքային շրջափուլում է դրվում դեռահասի անձի ընդհանուր սոցիալական և բարոյական դիրքորոշումների հիմքերը: Անցումային այս տարիքի կարևոր առանձնահատկությունը նույնականացման ճգնաժամն է կամ, ինչպես ասում էր Էրիկ Էրիքսոնը, «Նույնականացում կամ դերերի խառնաշփոթ»: Դեռահասն ակտիվորեն «փորձում» է տարբեր սոցիալական դերեր, որոշում է պահանջմունքները, հնարավորություններն ու իրավունքները, որոնք բնորոշ են յուրաքանչյուր նոր կերպարի: Կախված այն հանգամանքից, թե ինչպես է ընթանում տարիքային այս փուլը, ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում դեռահասի անձը, մեծապես պայմանավորում է նրա հետագա ողջ կյանքի ընթացքը: «Դեռահասության տարիքը ամենաբարդն է մանկավարժների և ծնողների համար, և ամենաճգնաժամայինը հենց դեռահասների համար», նշել է հայտնի մանկավարժ-հոգեբան Գ. Բադմաևը:

Բազմաթիվ են դեռահասության տարիքային շրջափուլին նվիրված հոգեբանամանկավարժական գիտահետազոտական աշխատությունները, որոնցում առկա են մեծաթիվ ուսումնասիրություններ՝ դեռահասության տարիքի

հոգեբանական առանձնահատկությունների, դրսևորումների, միջանձնային ու միջխմբային փոխհարաբերությունների, վարքաձևերի, այդ թվում նաև դեվիանտ վարքի դրսևորումների պատճառահետևանքային կապերի վերաբերյալ: Սակայն անհրաժեշտ է շեշտել այն հանգամանքը, որ սույն ատենախոսության մեջ արծարծված է դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հոգեբանական կողմը, որը կարևոր է և կարիք ունի պատճառահետևանքային կապերի արծարծման ու լուսաբանման:

Ատենախոսությունը բաղկացած է տեսական և փորձարարական մասերից՝ ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության բաժնում հատուկ ներկայացված են հետազոտության արդիականությունը, նպատակը, խնդիրները, վարկածը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական և տեսական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը: Ատենախոսության առաջին և երկրորդ գլուխները ներառում են տեսական վերլուծություններ դեռահասության տարիքային առանձնահատկությունների, հոգեֆիզիոլոգիական զարգացման ու հասունացման օրինաչափությունների, դերադիրքային վարքի, սոցիալական, մասնավորապես, սեռադերային սոցիալականացման ու սեռադերային նույնականացման հնարավոր աղճատման և հոգեբանական հարմարման խնդիրների վերլուծությանը, վերհանմանն ու մեկնաբանություններին, վերջիններիս դիտարկելով դեռահասի սեռադերային նույնականացման լույսի ներքո: Առկա են 14 աղյուսակ և 11 գծապատկեր: Առանց հավելվածի ատենախոսության ծավալը կազմում է 142 տպագիր էջ: Այն պարունակում է 154 գրական աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել բացահայտել և վերհանել դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի էությունը, դրսևորման առանձնահատկությունները, զարգացման փուլայնությունը՝ երևույթը դիտարկելով հոգեբանական հարմարման համատեքստում: Առաջադրված խնդիրները, համահունչ են նպատակին, որի առումով տեսամեթոդաբանական վերլուծության է ենթարկվել հիմնախնդրի էությունը և դրսևորման առանձնահատկությունները, վերհանվել են դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի և հոգեբանական հարմարման փոխկապակցվածությունը, ներկայացվել են սեռադերային նույնականացման դեստրուկցիայով պայմանավորված՝ դեռահասների հավակնությունների և ինքնագնահատականի դրսևորումները, տարիքային փուլայնությունը, անձի եսակենտրոնության սոցիոկենտրոնության յուրատիպ

առանձնահատկությունները, մշակվել են մեթոդական հանձնարարականներ դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի կանխարգելման ուղղությամբ:

Ատենախոսը աշխատանքի տեսական մասում մանրակրկիտ վերլուծության է ենթարկել դեռահասության տարիքային շրջափուլի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ինչի արդյունքում փաստել է, որ դեռահասության տարիքային շրջափուլի այս կամ այն հիմնախնդիրներն ամփոփվում են դեռահասության տարիքի բնութագրի ներքո, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ դեռահասի պուբերտատ զարգացումը, իմացական զարգացումը, դեռահասի հարմարման գործընթացները և ինքնության յուրատիպ դրսևորումները, ներկայացվել են դեռահասության փուլի կարևոր և հիմնարար փոփոխություններից մեկի՝ սեռահասունացման գործընթացով պայմանավորված հոգեբանական նորագոյացությունները:

Պետք է նշել, որ ատենախոսի կողմից առաջադրված վարկածում նոր գաղափար ու նորովի մոտեցում է առաջադրված հիմնախնդրին առ այն, որ դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման առանձնահատկություններից են՝ սեռին ոչ համարժեք դերային կարծրատիպերի դրսևորումները, հակառակ սեռին նույնացման միտումները, սեփական Ես-ի ընդունման աղճատումներն ու սոցիալական միջավայրում ադապտացիայի անբավարար մակարդակը:

Հենվելով հիմնախնդրի յուրատիպություններով ու դեռահասության տարիքային շրջափուլի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա առանցքային հետազոտողների (Դ. Էլկոնին, Ա. Նալչաջյան, Գ. Կրայգ և Դ. Բոկում, Ի. Ս. Կոն, Դ. Ն. Իսաև, Վ. Ե. Կագան, Ս. Խուդոյան և ուրիշներ) արդյունքների ու հայեցակարգային մոտեցումների վրա, ատենախոսը յուրովի է մոտեցել հիմնախնդրին, առաջադրելով նոր դրույթներ և հայեցակարգային մոտեցում: Բացահայտվել, մեկնաբանվել և լրամշակվել են դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման բնութագրական չափանիշները, սեռադերային նույնականացման դեստրուկցիայի փուլայնությունը և դրանց հիմքում առաջացող սոցիալական հարմարման առանձնահատկությունները: Կիրառելով հոգեբանական լուրջ ու հուսալի մեթոդական ապարատ, հավուր պատշաճի հավաքագրվել են հետազոտությունների տվյալները, որոնք ենթարկվել են որակական և համեմատական վերլուծության և հնարավորություն են ընձեռել ատենախոսին հիմնավորել առաջադրած կանխադրույթները մասնավորապես այն, որ դեռահասության տարիքային փուլի զարգացմանը զուգընթաց տղա և աղջիկ դեռահասների մոտ որոշակի փոփոխության են ենթարկվում սեռադերային

նույնականացման անդրոգինության հատկանիշները՝ տղաների մոտ դրսևորվելով տղամարդու վերաբերյալ կարծրատիպային պատկերացումների ամրապնդմամբ, իսկ աղջիկների մոտ, ընդհակառակը՝ անդրոգինության մասին պատկերացումների խորացմամբ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տղաների և աղջիկների հագուստի ունիֆիկացման և վերբալ մակարդակում նույնական արտահայտչամիջոցներով:

Ատենախոսը հետազոտությամբ հիմնավորել է, որ վաղ դեռահասության փուլում ակնառու է դառնում սեռադերային չտարբերակված հատկանիշների գերակայություն, որը վեր է ածվում ուշ դեռահասության փուլում տղաների մոտ՝ մասկուլինության, իսկ աղջիկների մոտ՝ անդրոգինության որոշակի միտվածության: Ֆ. Գուդինաֆի «Ինքնանկար» մեթոդիկայի հեղինակային մոդիֆիկացիայի, Ս. Բեմի «Սեռադերային նույնականացման ախտորոշման» հարցարանի, Մ. Կունի և Տ. Մաքպարտլենդի «Ով եմ ես» հարցարանի, Յու. Ռեշետնյակի և Գ. Վասիլչենկոյի մշակմամբ Տ. Լիրիի հարցարանի կիրառմամբ ատենախոսը իրավացիորեն հիմնավորել է այն իրողությունը, որ սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշներով դեռահասների մոտ առավել, քան ստուգիչ խմբում, վտանգված են թե՛ հավակնությունների և թե՛ ինքնագնահատականի մակարդակները: Սեռադերային նույնականացման դեստրուկցիան հանգեցնում է անհամարժեք բարձր կամ ցածր հավակնությունների պարագայում, դեռահասների ինքնագնահատականի մակարդակի նվազմանը:

Հետաքրքրական են և արժեքավոր ատենախոսի կողմից ներկայացված եզրակացությունները, որոնք բնութագրվում են թե տեսական ու թե գործնական տեսակետներով:

Ատենախոսության և սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է միմյանց և ՀՀ ԲՈԿ-ի թվանիշին Ժ.Թ. 00.03-<<Սոցիալական հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին: Ծավալուն և տեսական ու էմպիրիկ հետազոտությունների արդյունքներով, ատենախոսը կարողացել է լուծել իր առաջադրված նպատակն ու խնդիրները:

Այնուամենայնիվ, որպես հետազոտական աշխատանք ատենախոսության մեջ առկա են խնդրահարույց հարցեր, որոնք մեկնաբանման կարիք ունեն:

1. <<Փորձարարական հետազոտության կազմակերպումը և մեթոդները:: ենթագլխում նշվում է, որ փորձարարական հետազոտությունն իրականացվել է ինչպես Երևանի, այնպես էլ մարզային համայնքային վերականգնողական կենտրոններում, սակայն փոձարարական հետազոտության արդյունքներում արտացոլված չեն քաղաքաբնակ և

գյուղաբնակ դեռահասների սեռադերային նույնականացման առանձնահատկությունները:

2. Աշխատանքում թույլ է ներկայացված հեղինակի հետևություններն ու ենթադրությունները առաջադրված հիմնախնդրի պատճառահետևանքային կապերի վերաբերյալ:
3. Աշխատանքի հետազոտական բաժնում անհրաժեշտ չափով ներկայացված չէ, թե որքան ժամանակ է հատկացվել սեռադերային նույնականացման հարմարման համատեքստը վեր հանելու և բնութագրելու նպատակով:
4. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը շեշտադրեր հիմնական և ստուգիչ խմբերի ձևավորման մեթոդական հիմքերը, որոնք թեև առկա են, բայց, այնուամենայնիվ, աշխատանքում հանդիպում են կարծես ընդհատումներով և ներկայացված չեն համակարգված ձևաչափով:

Նշված անճշտություններն ու թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտահետազոտական արժեքը, դրանք ցանկություններ ու առաջարկներ են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Հայկի Խաչատրյանի «ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» թեմայով <<Սոցիալական հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական նշանակություն, արդյունքները հավաստի են, հրատարակված աշխատանքներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և Ժ.Թ. 00.03 - «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին, իսկ հեղինակը՝ Լիլիթ Հայկի Խաչատրյանը արժանի է հոգեբանական գիտությունների գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 27.11.2023թ նիստում (արձանագրություն թիվ 5), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ., դոցենտ Թ. Յու. Ազատյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Ա.Ա. Գյորգյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր **Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**

«28» «Նոյեմբերի» 2023թ